



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«14» հունվարի 2019թ. N: 2 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հուլիսի 21-ի N 800-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2019 թվականի հունվարի 9-ի դիմումը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2019 թվականի հունվարի 8-ից Հայաստանի Հանրապետության «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության համար՝ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով, սահմանել լրացուցիչ արձակուրդ մինչև 2019 թվականի հունվարի 11-ը՝ բաց թողած ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու պայմանով:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին՝ սույն կարգադրության մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:



Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է